

ԿՐՈՆԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԱՅՐԸ

«Մի՛ երկնչի՛ք, զի ահաւասիկ անտեսանեմ ձեզ աւրախութիւն մեծ, որ եզիցի ամենայն ժողովրդեանն: Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է Օծեալ Տէր, ի քաղաքի Դաւրիս:»

Աստուածային այս նոր յայտնութեան անձիւր բերկրանքով, Մեսիայի գալուստը աւետող առն ցնծալից ուրախութեամբ է որ Նոր Կտակարանը կը բերէ իր պատգամը:

«Ընչմարիտ Աստուած» էր ծնունդ առնողը, որ «ծնաւ կատարելապէս» իրեն հասնելի սրբացած կոյսէ մը՝ Մարիամէն: Աստուած ա՛լ չէր ուզեր մարդոց վախը, ձեւակցի յարգանքը, այլ կ'ուզէր սիրուիլ, հասկցուիլ, հայր ըլլալ իր ստեղծածներուն: Եւ երկիր իջաւ, Նոր Ագամ եղաւ, ցոյց տալով մարդոց իր կամքը կատարելու, իրեն հարազատ որդիներ գտնալու պայմանները: Իսկ Ս. Կոյսը, թէն սկիզբը անդիտակցաբար, մեծ դեր ունէր Աստուածային Մարդեղութեան սքանչելիքին մէջ:

Յիսուս իր առաքելութեան չսկսած՝ Մարիամը ունեցաւ իրեն հարազատ երկրային մայր: Ան էր Մուրբ Մանկան կաթնատուն: Ան էր Մոռնուկէն առաջին անգամ մայր կոչուողը: Ան Նոր Եւա մըն էր, երկրային կենսք տուած Աստուածորդիին և սաղմոսերգուած Շղիսարէթէն հոգեշունչ բառերով. «ՕՐհնհալ ես դու ի կտայոյս, և օրհնեալ է պտուղ որովայնի քոն:»

Շուրջ երեսուն տարիներ յետոյ, Կանայի հարսանիքին, Յիսուս պատուաշանած էր իր Մօրը խնդրանքին «Զի՛ կայ իմ և քո, կին դու, չէ է հասեալ ժամանակ իմ բառերով: Այս խօսքը, հակառակ ժամանց մեկնաբանութեան, ոչ կոյտ ու փոպիտ էր, ոչ ալ անարգալից: Քրիստոս պարզապէս հասկցնել ուզած էր թէ չէր հասած ժամանակը իր փրկագործութեան:

Իր ժամանակը հասած համարելէ յետոյ, Յիսուս իր Մօր յայտնեց թէ իրենց մայր-որդի յարաբերութիւնը պիտի փոխուէր: Ճարգ Մարիամ Յիսուսի մայրն էր

միայն, բայց հիմա պիտի դառնար մայրը համայն մարդկութեան: Մայրը բոլոր առնոց՝ որոնք Յիսուսի արևմտք պիտի գնուէին. որովհետեւ Մարիամ Աստուածածա մայր էր: Ծիշք այս էր պատճառը որ Յիսուս իր մայրը պարզ «կին» բառով կոչեց, որ հոս կը խորհրդանշէ ընդհանուր իգական սեռը: Այդ էր պատճառը նաև որ խաչի բարձունքէն ալ Տէրը նոյն բառով որակեց Տէրամայրը, զինքը Յովհաննէս Աւետարանչին — և անով՝ բովանդակ առաքելական դասուն ու նաև համայն մարդկային ցեղին — մայրութիւնը յանձնած ատեն. «Կին դու, ահա որդի քոն:»

Սքանչելի էր խորհուրդը և մեծ էր իմաստը: Երկրորդ անգամն էր որ Տէրը Ս. Կոյսին մայրացումը կ'աւետէր: Առաջին անգամ՝ Գարբիէլ հրեշտակապետի միջոցաւ Նազարէթի մէջ տրուեցաւ աւետիսը թէ ան Մայրը պիտի ըլլար Մեսիային, իսկ արդ, Գողգոթայի վրայ, աւետիսը թէ պիտի ըլլար մայրը նաև ընդհանուր Քրիստոնէական Եկեղեցուն:

Ուրեմն չուրջ երեք տարի տեւող խաչի ճամբան, որ Կանայի հարսանիքէն սկսած էր, իր լրումին հասաւ Քրիստոսի մահուամբ սրբացած խաչին վրայ: Մայրը որ մինչև Գողգոթայի ստորոտը հետևած էր իր հարազատ Զուկին՝ Կանայէն իսկ գիտէր թէ Ան ի՛նչ մեծ առաքելութեան է կոչուած, Նժոն իր միակ ուղիին Տէրովը զո՛ւ ժողովրդանելու յօժարած Աբրահամի, և համակերպեցաւ աստուածային անօրինութեան, ինչպէս նոյն այդ համբուրելի ոգիով, «Ահաւասիկ կամ աղախին Տեսան», Նազարէթի խոնարհ իր խրճիթին մէջ յայտնած էր պատգամաբեր հրեշտակին համամտութիւնը աշխարհի Փրկչին մայրը ըլլալու գերազանց դերին ու դիրքին:

Աստուածածնայ Ս. Գրքին մէջ արձանագրուած վերջին խօսքը եղաւ. «Որ զինչ ասիցէ ձեզ՝ տրասցիք» — Կանայի հարսանիքի ատեն արտասանուած: Ահաւասիկ իր յաւիտենական պատգամը իր Որդւոյն վարդապետութեան հետեւող բոլոր հաւատացեալներուն:

« ՄԵՍՐՈՊ ԱՐԶ. ՄՈՒԹԱՅԵԱՆ ԵՐԱՆԱԿԱՆ